

ուս՝ ցաւելով ստիպուեմք թողուլ ի հրատարակութենէ՝ վերջին մասը, թա-
թարերէնը, որ և մեծագոյն մասն է, 86 երես գրոցն, մինչ հայերէնն՝ 74
միայն է, ժամանակին թողլով՝ ուրիշ խորհուրդ կամ հնարք մի տալու-
միայն՝ թերեւս՝ քանի մի դիւրիմաց յիշատակ՝ կամ ըստ գրուածին կամ
թարգմանօրէն և քաղելով՝ առնուեք ըստ տարէթուոց, աստղանշաւ ի սկզբ-
բանն, որ իմացուի լեզուին կամ գրողին տարբերութիւնն:

Լեհաց և Վլադաց Հայ գաղթականք՝ ինչպէս և շատ ուրիշ կողմանց, ըստ
աւանդութեան, կու սկսին Անի քաղաքին և Բագրատունեաց նուաճուելէն
վերջը. իրենց գլխաւոր բնակատեղին կ'ըլլայ Լեմպէրկ, որ և Լէոպօլիս, ըստ
Հայոց՝ Լով կամ Իրվով, որոյ եկեղեցւոյ (հրաշահուչակ Տիրամօր պատկերաւ)
առաջին փայտեղէն շինութիւնն եղած կ'ըսուի՝ յամի 1182, իսկ երկրորդն և
քարայէնն՝ ի 1363: Ասա թուականէս յետոյ՝ մնան գրաւոր յիշատակարանք
(տես ի գիրս Ճանապարհորդութեան Հ. Մինասայ). որոց կարգէն և անկո-
րուստ մնացեալ հնագոյնն՝ է Մեսրովպ կաթողիկոսի վաւերական կոնդակն՝
յամի 1364, սովորական ձեւով գրանի ծրարեալ՝ յիրար կպած երկար մագա-
ղաթով. և ուղղած է գիրն առ գաղթականս՝ Լով, Լուցկա և Վլատիմիր
քաղաքաց և անոնց վիճակաց, իրենց եպիսկոպոս խաւրելով զԳրիգոր ոմն,
որմէ առջինները, կ'ըսէ, ինքնագլուխք էին և ոչ օրինաւորք: Տասն տարի
վերջը իր յաջորդն՝ Կոստանդին կաթողիկոս՝ զնոյն բան և զնոյն Գրիգոր
հաստատեր է՝ կարճ գրուածով և ստորագրութեամբ՝ Մեսրովպայ կոնդակին
ներքեւ, զոր եպիսկոպոսն բերեր էր ի Սիս՝ վերահաստատութեան համար,
իբր տասն տարի այլ ետեւ (1383) յաջորդն Կոստանդին Թէոդորոս՝ ձեռ-
նագրէ և խաւրէ նոր եպիսկոպոս, զՏէր Թովհանեկս որդի Պր. Կարապետի.
ուրիշ կոնդակի մէջ (1389) փոխանակ Վլատիմիրի յիշէ (ի թեմս կամ ի
վիճակս եպիսկոպոսին) զՄանգիրման (համարիմք Ագքիրման), Լով ու Լուց-
կայի հետ նա և զՍեդրաք, Չելով (Սուչաւա), Կամենից, Վլախաց երկիրն,
Պրտին (Պուտա—Բէշշ?) և Ընկիւալայ? — Թէոդոր այս երկրորդ և նշա-
նաւոր կոնդակով վերահաստատէ զՅովհաննէս և մերժէ զԳրիգոր. զոր՝ թէ-
պէտ և իր նախորդներէն այլ ընդունուած գրէ, բայց իր առաջին կոնդակին
մէջ յիշուած չըլլալով, և թաթարալեզու տարէգրի մէջ այլ յատկաբար Ռոյո
Գրիգոր մի (մեծ կամ առաջին) յիշուած ըլլալով, տարակուսիմք, մի՞ թէ երկու
Գրիգոր եղած են: Թողլով այս քննութիւնը, իբրեւ հետաքննական և հին
դիպուած մի մեր գաղթականաց, մասամբ նման Նիկոյեանին, (թէ և ոչ
պատուաւոր, այլ ըստ ներելոյ եկեղեցական պատմութեան՝ որոյ հարկ է եր-
բեմն և զանհաճոյն յիշել և դատել զչարն և զբարին), հրատարակեմք զայս
կոնդակ Թէոդորի՝ յառաջ քան զՏարէգիրս, և քան զայն այլ առաջ՝ զկոն-
դակն Մեսրովպայ, իբրեւ հնագոյն հաւաստագիր մի այս մեծ գաղթականու-
թեան, միանգամայն և նախընթաց լծորդ Թէոդորոսի կոնդակին. երկուքն
այլ իրենց ուղիղ կամ սխալ տառագրութեամբ: